

Կ-694-21.07.2020-ՉԿ--011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Կրթության մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի Ուայսուհետ՝ Օրենք» 14-րդ հոդվածի 4¹-րդ մասը և 43-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 37-րդ հոդվածի՝

1. 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.
2. 9-րդ կետից հանել «, վերահսկում է դրանց իրականացումը» բառերը.
3. 14-րդ կետից հանել «և վերահսկումը» բառերը.
4. լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 14.1-ին 14.2-րդ և 14.3-րդ կետերով.

«14.1) սահմանում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը.

14.2) մշակում, ներդնում և վարում է կրթության ոլորտի պետական վարչական ռեզիստրները.

14.3) հաստատում է լիցենզիայի ներդիրի և լիցենզավորված անձանց գործունեությանն առնչվող հաշվետվության ձևերը.»:

Հոդված 3. Օրենքի 37¹-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 37¹. Նախադպրոցական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության բնագավառներում վերահսկողությունը

1. Նախադպրոցական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության բնագավառներում պետական վերահսկողությունը ապահովում է օրենքով ստեղծված համապատասխան տեսչական մարմինը՝ կանխարգելիչ, վերահսկողական, հետադարձ կապի ապահովման և օրենքով սահմանված այլ գործառույթների միջոցով:

2. Կրթության ոլորտի տեսչական մարմինը իրականացնում է ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների կողմից նախադպրոցական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում օրենսդրության այդ թվում՝ կրթության պետական չափորոշիչների ու կրթական ծրագրերի պահանջների պահպանման վերահսկողությունը, ինչպես նաև խորհրդատվական և կանխարգելիչ գործառույթների միջոցով, նպաստում է կրթական ծրագրերի արդյունավետ կազմակերպման, դրանց յուրացման ու կրթության որակի բարձրացման գործընթացներին:»:

Հոդված 4. Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ուսումնական հաստատությունների պետական պատվերով ֆինանսավորելու կարգը և չափանիշները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ հաշվի

առնելով ուսումնական հաստատության տիպը, կրթական ծրագրերի և դրանց կազմակերպման առանձնահատկությունները: Որպես հաշվարկման չափանիշ կարող է ընդունվել խումբ թիվը կամ սովորող թիվը:»:

Հոդված 5. Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «մեկ սովորողի հաշվարկով» բառերը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի 14.1-ին, 14.2-րդ և 14.3-րդ կետերով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունման ժամկետ սահմանել մինչև 2021 թվականի հունիսի 30-ը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ (Կ-694-21.07.2020-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Կրթության մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 41-րդ մասը եւ 43-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 37-րդ հոդվածի՝

- 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.
- 9-րդ կետից հանել «, վերահսկում է դրանց իրականացումը» բառերը.
- 14-րդ կետից հանել «եւ վերահսկումը» բառերը.
- լրացնել [հարհետեկյալ բովանդակությամբ](#)՝ 14.1-ին 14.2-րդ եւ 14.3-րդ կետերով.
«14.1) սահմանում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը.
14.2) մշակում, ներդնում եւ վարում է կրթության ոլորտի պետական վարչական ռեգիստրները.
14.3) հաստատում է լիցենզիայի ներդրի եւ լիցենզավորված անձանց գործունեությանն առնչվող հաշվետվության ձևերը.»:

~~**Հոդված 3.** Օրենքի 37¹-րդ հոդվածը չարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«Հոդված 37¹. Նախադպրոցական, կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության ոլորտներում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը~~

~~1. Նախադպրոցական, կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության ոլորտներում տեսչական մարմինն իրականացնում է օրենսդրության պահանջների պահպանմանը, կրթության որակի բարձրացմանը եւ կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն ուղղված վերահսկողություն:»:~~

Հոդված 3. Օրենքի 37¹-րդ հոդվածը չարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 37¹. Նախադպրոցական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության բնագավառներում վերահսկողությունը

1. Նախադպրոցական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության բնագավառներում պետական վերահսկողությունը ապահովում է օրենքով ստեղծված համապատասխան տեսչական մարմինը՝ կանխարգելիչ, վերահսկողական, հետադարձ կապի ապահովման և օրենքով սահմանված այլ գործառնությունների միջոցով:

2. Կրթության ոլորտի տեսչական մարմինը իրականացնում է ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների կողմից նախադպրոցական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում օրենսդրության այդ թվում կրթության պետական չափորոշիչների ու կրթական ծրագրերի պահանջների պահպանման վերահսկողությունը, ինչպես նաև խորհրդատվական և կանխարգելիչ գործառնությունների միջոցով, նպաստում է կրթական ծրագրերի արդյունավետ կազմակերպման, դրանց յուրացման ու կրթության որակի բարձրացման գործընթացներին:»:

Հոդված 4. Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մաս 2-րդ նախադասությունը չարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ուսումնական հաստատությունների պետական պատվերով ֆինանսավորելու կարգը և չափանիշները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ հաշվի առնելով ուսումնական հաստատության տիպը, կրթական ծրագրերի և դրանց կազմակերպման առանձնահատկությունները: Որպես հաշվարկման չափանիշ կարող է ընդունվել խումբ թիվը կամ սովորող թիվը:»:

Հոդված 5. Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «մեկ սովորողի հաշվարկով» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի 14.1-ին, 14.2-րդ և 14.3-րդ կետերով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունման ժամկետ սահմանել մինչև 2021 թվականի հունիսի 30-ը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-694-21.07.2020-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	1-ին հոդվածում անհրաժեշտ է վերանայել «Կրթության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 41-րդ մասին կատարված հղումը՝ նկատի ունենալով նույն օրենքի 14-րդ հոդվածի դրույթները:	Վրիպակը ուղղվել է , նախագծում «41-րդ մասը» բառերը փոխարինվել է «4 ¹ -րդ մասը» բառերով:	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասում «նոր» բառն անհրաժեշտ է փոխարինել «հետևյալ բովանդակությամբ» բառերով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	Հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 14.1-ին, 14.2-րդ և 14.3րդ մասերով նախատեսված կարգավորումներով պայմանավորված՝ նախագծի անցումային դրույթներում անհրաժեշտ է նախատեսել նաև կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման նախատեսվող ժամկետները:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	Հոդված 3	Նախագծի 3-րդ հոդվածում հղումները խմբագրման կարիք ունի:	Վրիպակը ուղղվել է, նախագծում «371» թիվը փոխարինվել է «37 ¹ » թվով:	Ընդունվել է
5.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սոֆյա Հովսեփյան	Հոդված 3	Հոդվածի լրամաշկել և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 37 ¹ . Նախադպրոցական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության բնագավառներում վերահսկողությունը	Ընդունվել է, կատարվել է հոդվածի ամբողջական խմբագրում	Ընդունվել է

			<p>1. Նախադպրոցական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության բնագավառներում պետական վերահսկողությունը ապահովում է օրենքով ստեղծված համապատասխան տեսչական մարմինը՝ կանխարգելիչ, վերահսկողա-կան, հետադարձ կապի ապահովման և օրենքով սահմանված այլ գործառնությունների միջոցով:</p> <p>2. Կրթության ոլորտի տեսչական մարմինը իրականացնում է ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների կողմից նախադպրոցական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում օրենսդրության այդ թվում՝ կրթության պետական չափորոշիչների ու կրթական ծրագրերի պահանջների պահպանման վերահսկողությունը, ինչպես նաև խորհրդատվական և կանխարգելիչ գործառնությունների միջոցով, նպաստում է կրթական ծրագրերի արդյունավետ կազմակերպման, դրանց յուրացման ու կրթության որակի բարձրացման գործընթացներին:»:</p>		
6.	<p>«Աժ պատգամավոր Լիլիթ Ստեփանյան»</p>	<p>Լրացնել նոր հոդված,</p>	<p>Հոդված 4-ը փախարհինել հոդված 6 և որպես հոդված 4 լրացնել՝ «Հոդված 4. Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մաս 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ուսումնական հաստատությունների պետական պատվերով ֆինանսավորելու կարգը և չափանիշները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ հաշվի առնելով ուսումնական հաստատության տիպը, կրթական ծրագրերի և դրանց կազմակերպման առանձնահատկությունները: Որպես հաշվարկման չափանիշ կարող է ընդունվել խումբ թիվը կամ սովորող թիվը:»:</p>	<p>Ընդունվել է, կատարվել է համապատասխան լրացում:</p>	<p>Ընդունվել է</p>

7.	ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Ստեփանյան	Լրացնել նոր հոդված,	Հոդված 5. Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «մեկ սովորողի հաշվարկով» բառերը:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է
8.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սոֆյա Հովսեփյան	Հոդված 4 փոխարինված հոդված 6.	Հաշվի առնելով կառավարության 3-րդ կետի առաջարկը, հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մաս. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի 14.1-ին, 14.2-րդ և 14.3-րդ կետերով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունման ժամկետ սահմանել մինչև 2021 թվականի հունիսի 30-ը:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է